ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2024 թվականի № 362-Ա

ԼԱԼԱ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՄՐԳԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի և 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի և հիմք ընդունելով *Լալա Բադալյանի*՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Լալա Մանվելի Բադալյանին*** 2024 թվականի սեպտեմբերի 12-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Մրգաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2019 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված № 114 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Մրգաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Վարդան Հարությունի Վարդանյանին*** և վարձատրել հաստիքացուցակով տնօրենի համար հաստատված դրույքաչափին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Մրգաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի սեպտեմբերի 12
ք. Հրազդան